Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2311

Тніцинній

Ф-ніцубнтнн
ренисиднсіни рунніер

84
У-99

Рига-ра
1903.

2011

Գիր դը-Մոպասսան.

84
Ս-39 սր.
Հեղինակում են մեր գրքերի
գրքույկի վերջերում

ԳԵՂԵՑԿՈՒՀՈՒ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՆԸ

ԵՒ

ՀԱՆԳՈՒՑԵԱԼԻ ԳԱՂՏՆԻՔԸ

Թարգմ. ռս.

Երուանդ Տէր-Յովհաննիսեանցի.

Գ (1002/5350) 16420-58
Գագուր. Հայոց Ազգային Գրադարան
Հանրապետական Գրադարան
Հանրապետություն
Հ.Ս.Խ.Հ. ՀԱՅԿՈՒՅԻ ԳՐԵԴԱՐԱՆ
Հ.Ս.Ս.Հ. Պետական Գրադարան
7/XI—1922
Գրադարանի Մասնագետ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԲԱԿՈՒ
Տպարան „Արարատ"
1903.

2003

39651-ա.

Дозволено цензурою. Тифлисъ, 25-го Іюня 1903 г.

I.

ԳԵՂԵՑԿՈՒՀՈՒ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆԸ

Բարեկամս, դուք խնդրել էիք ինձ պատմել Ձեզ՝ իմ կեանքի ամենազգայուն յիշողութիւնները։

Ես արդէն բաւականին ծերացած եմ, անորդի, չունիմ և ոչ մի ազգական. ուստի թոյլ եմ տալիս ինձ բոլորը Ձեզ պատմելու ու խոստովանելու։ Միմիայն խոստացէք, որ իմ անունը ոչ որին չպիտի յայտնէք։

Ձեզ յայտնի է, որ ես շատ եմ սիրել և աւելի յաճախ սիրուել։

Ես շատ գեղեցիկ էի, կարող եմ դորա մասին խօսել և այժմ, երբ գեղեցկութեանս յետքն անգամ չի մնացել։ Սէրը իմ հոգու կեանքն էր այնպէս, ինչպէս օդը մեր մարմնոյ համար։

Ես, առանց վարաքշանքի և առանց ուրիշ մարդու հետ կապ ունենալու կ'գերադասէի մահը։

Կանայք յաճախ պնդում են, որ բոլոր հոգով ու մարմնով միայն մի անգամ կարելի է սիրել, բայց ինձ պատահել է՝ շատ անգամ սիրել այնպիսի սիրով, որ չէի հաւատում, թէ երբ և իցէ վերջ կունենայ այդ սէրը, սակայն նա միշտ էլ այնպէս բնական կերպով է հանդիպել, ինչպէս հանդիպում է կրակը, որին չես աւելացնում փայտ։

Ես կպատմեմ Ձեզ իմ դլխին եկած հէնց առաջին պատահարը, ուր ես բոլորովին անմեղ եմ եղել և որը սկիզբն էր բոլոր յետագաների։

Պէկի գեղագործի տարդի վրէժխնդրութիւնը ինձ յիշեցրեց մի սարսափելի դրամա, որի վկաներին ակամայից եղել եմ ես։

Մօտ մի տարի էր անցել, ինչ ես ամուսնացել էի հին, յայտնի Բրէտոնեան տոհմից հարուստ գրաֆ Դէ—կին...ի հետ, որին, ճիշտը ասած, ամենևին չէի սիրում։ Սէրը, անկեղծ, մարդ—սէրը, որը ես հասկանում եմ, միևնոյն ժամանակ կարօտում է ինչպէս ազատութեան նոյնպէս և խաչնդոտների ու արգելքների։ Մինչ կապուած, կամ օրէնքով հաստատուած ու քահանայի ձեռքով օրհնուած սէրը կարող է կոչուել սէր։ Օրինական համբոյրը ոչ մի ժամանակ չի ունենալ այն քաղցրութիւնը ու քնքշութիւնը, ինչ ունի գողացած համբոյրը։

Ամուսինս բարձրահասակ ու գեղեցիկ կազմուածք ունէր և աչքի էր ընկնում իր ազատական ձևերով, սակայն այնքան էլ հեռատես չէր։

Նա խօսում էր պարզ, և արտայայտում այնպիսի կարծիքներ, որոնք կտրում էին դանակի պէս։ Երևում էր, որ նորա ծնողները լցրել էին նրա գլուխը պատրաստի խորհրդածութիւններով, որոնց իրանք էին ժառանգել իրենց նախորդներից։ Նա ոչ մի անգամ չէր տատանուում յայտնել իր յիմար ու անտեղի կարծիքը, չկամենալով մտածել անգամ, որ այդ բանի մասին կարող է և ուրիշ հայեացք լինել։ Եւ կարծես նորա գլուխը փակուած էր ամեն կողմից, որ նորա մէջ չլինի զաղափարներ փոխառութիւն այն զաղափարների, որոնք տան բաց պատուհանից փչող բամու նման թարմեցնում են մարդուս ուղեղը։

Դղեակը, ուր մենք էինք ապրում, մի անապատի մէջ էր, դա մի մռայլ, մեծ շէնք էր, շրջապատուած ծերունու մօրուսի նման

մամուռով ծածկուած հինաւուրց ծառերով։ Իսկական անտառը շրջապատուած էր բաւականին մեծ վիհով, որի ծայրում, որտեղից սկսում էր ամայութիւնը—անապատը, ունէինք երկու խոտով ու եղէգնով ծածկուած լճակներ։ Այդ լճակները միացնող անցքի ափին, ամուսինս պատուիրել էր շինել մի փոքրիկ տնակ վայրենի սագեր որսալու համար։

Բացի մեր սովորական աղախնուց, մենք ունէինք և մի պահապան, բաւականի յիմար, որը մինչև իր կեանքի վերջը հլու անձնատուր էր ամուսնուս, և մի աղախին, որ անչափ սիրում էր ինձ և կարծէք ընկերուհիս լինէր։ Ես նորան, աղախնուս, սորանից հինգ տարի առաջ Իսպանիայից էի բերել։ Նա ազօրինի էր, բայց հնարիւ նորա երեսի գոյնի, սև աչքերի և ինչպէս անտառ խիտ մազերի, որոնք միշտ ցրուած էին ճակտի վրայ, շատ հեշտութեամբ կարելի էր ընդունել իբրև ցիգանուհի։ Նա, որը կազմուածքով բան տարեկանի էր նմանում, միմիայն տասնուվեց տարեկան էր։

Աշունը վրայ հասաւ։ Սկսուեցաւ յաճախակի որսորդութիւնը թէ մեզ և թէ մեր հարևանի մօտ և ես նկատեցի երիտասարդ բարոն Ս....ին, որը յաճախում էր մեր դղեակը։ Յետոյ բարոնը ընդհատեց մեզ մօտ յաճախել և

ես նորան բոլորովին մոռացայ, սակայն նկատեցի, որ ամուսինս, իւր յարաբերութիւնը դէպի ինձ փոխեց։

Նա այնուհետև շատ քիչ էր խօսում, իսկ մտածում՝ շատ։ դադարեց ինձ գգուելուց և չնայելով, որ ուշ ուշ էր յաճախում իմ առանձնասենեակս, որը մի փոքր աղատ լինելու համար առանձնացրել էի, լսում էի գիշերները, թէ ինչպէս մէկը կամաց քայլերով մօտենում է սենեակիս դռներին և մի քանի բոպէից յետոյ դարձեալ հեռանում։

Որովհետև իմ պատուհանը ներքին յարկումն էր, ինձ թւում էր, թէ գիշերային խաւարի մէջ մէկը պատում է մեր դղեակի շուրջը։ Դորա մասին ես յայտնեցի ամուսնուս, որը ինձ մի քանի բոպէ խորը նայելուց յետոյ ասաց. «դա ոչինչ, մեր պահապանն է»։

Մի անգամ իրիկնադէմին երբ ճաշը վերջացրել էինք Երվէն, որ կարծես հակառակ սովորականին աւելի ուրախ տրամադրութեան ներքոյ էր, հարցրեց ինձ. «Չէք բարեհաճի անցկացնել երեք ժամ պահապանի սենեակում, որպէսզի սպանենք ամեն գիշեր իմ հաւերս գողացող աղուէսին»։

Ես զարմացայ և տատանուում էի, բայց որովհետև նա ինձ վրայ նայում էր այդ ժա-

մանակ մի առանձին յամառութեամբ, չուշացրի նորան պատասխանել. «Ի հարկէ, իմ ընկեր»։ Պէտք է ասել, որ յետ չէի մնալ գայլերի և վարազների վրայ որսի գնացող տղամարդուց և զարմանալու էլ չէր, որ ինձ յանձնել էին ազուէտ պահպանութիւնը։

Ամուսնուս դէմքը յանկարծ ընդունեց զբաղուած մարդու կերպարանք և կարելի էր ասել, որ նա ամբողջ գիշերը սաստիկ յուզուել էր։ Նա մի տեսակ տէնդի մէջ էր և անդադար կամ բարձրանում էր, կամ յետ նստում իր տեղը։

Ժամը տասը կլինէր, երբ նա յանկարծ հարցրեց. «Դուք պատրաստ էք»։ Ես կանգնեցի։ Եւ որովհետև Էրվէն ինքը բերեց ինձ հրացանը, ես հարցրի. «Գնդակով լցնեմ»։ Այնուհետև մի քանի բոպէից յետոյ նա մի առանձին տօնով աւելացրեց. «Դուք Ձեր սառնասրտութեամբ միայն կարող էք պարծենալ»։ Ես սկսեցի ծիծաղել։ «Ե՞ս, ինչու համար պէտք է սառնասիրտ լինել»։

Տանը արդէն բոլորը քնել էին, երբ մենք առանց աղմուկի անցանք հրապարակ։ Լուսինը կարծես դեղին գոյնով ներկել էր հին ու մռայլ դղեակի փայլուն ալիւսէ կտուրը։ Շինութեան երկու ծայրերում շինուած աշտարակները ծածկուած էին լուսնի փայլուն լոյսով և ոչ մի

փոքրիկ շշունչ անգամ չէր խանգարում այդ պարզ ու տխուր, քաղցր ու կաշկանդուած կարծես մեռած գիշերը. ոչ քամու փչելը, ոչ գորտի կռռացը և ոչ էլ շիշկի թախծալի ձայնը. կարծես ծանր շղթան կաշկանդել էր բոլորին։ Անցնելով տերևների միջից, ես զգում էի թափուած տերևների թարմութիւնը. որը ամբողջովին շրջապատել էր ինձ։ Ամուսինս ծրագրում չէր հանում, միշտ լռում էր, և չէր կամենում արձակել ամենափոքր շշոյն անգամ և ոտով ու գլխով որսորդութեան մէջ ուղուածի նման, նայում էր անընդհատ դէպի խաւարը։

Մենք շատով հասանք լճակների ափին։ Նոցա շրջապատող եղէգները անշարժ էին։ Ամենափոքր հովն անգամ չէր զուրգուրում և հովհարում նոցա. միայն ջրի մէջ երևում էր հազիւ նշմարելի շարժում. երբեմն ջրի մակերեսոյթի մէկ կէտը շարժուելով, շրջանակերպ տարածում էր իր շուրջը, որոնք քանի գնում մեծ ծաւալ էին ստանում, նմանելով սրբերի նիմբներին շրջապատող լոյսին։

Երբ հասանք մեկին, ուր պիտի հսկէինք, ամուսինս առաջ ինձ թողեց, իսկ ինքը սկսեց լցնել հրացանը, որը ինձ վրայ վատ տպաւորութիւն թողեց։ Նկատելով, թէ ինչպէս լեզուակը բարձրացնելու ժամանակ ցնցուեցայ՝

հարցրեց. Գուցէ Ձեզ այդ էլ բաւական էր, եթէ այդպէս էկարող էք գնալ տուն»։ Սաստիկ զարմացած, պատասխանեցի. «Ամենևին ոչ, ես չեմ եկել այստեղ, որ դարձեալ վերադառնամ։ Այսօր ինչ է պատահել Ձեզ»։ Նա չհնչեց. «ինչպէս կամենում էք»։ Եւ մենք մնացինք մեր տեղերում անշարժ։

Որովհետև արդէն անցել էր կէս ժամ և ոչինչ չէր համարձակւում խանգարել աշնանային գիշերուայ խաղաղութիւնը, ես հարցրի կամաց ձայնով. «Դուք հաստատ հաւատացած էք, որ ճիշտը այստեղից կանցնի նա»։ «Այո՛ ես հաւատացած եմ». պատասխանեց նա։

Դարձեալ լռութիւնը տիրեց։

Կարծեաք սկսել էի նիրհել, երբ զգացի, որ ամուսինս բռնելով ձեռքս, բոլորովին փոխուած ձայնով ասաց. «Տեսնում էք ծառերի ետևում նորան»։ Ես սկսեցի դիտել, բայց ոչինչ չկարողացայ նշմարել։ Էրվէն անընդհատ աչքերիս մէջ նայելով սկսեց դանդաղ բարձրացնել հրացանը։ Ես ինքս ևս պատրաստւում էի հրացանս պարպել, երբ նկատեցի երեսուն քայլաչափ հեռաւորութեան վրայ լուսնու լուսով լուսաւորուած մի մարդու։

Նա անցնում էր կորացած մարմնով և արագ քայլերով, կարծես կամենալով փախչել ուրիշից։ Ես այն աստիճանի յուզուած էի, որ սաստիկ աղմուկ բարձրացրի, սակայն մինչ յետ նայելս, աչքերս շլացրեց կրակը, լսուեցաւ խլացուցիչ հրացանի պարպումը, և տեսայ գրնտակից ընկնող գայլի նման գետին գլորուող մարդուն։

Լցուած երկիւղով, ես բարձրացրի լաց ու կոծ, այդ ժամանակ Էրվէի անգութ բազուկը բռնեց շնչափողիցս։ Նա գլորեց ինձ գետին ապա բարձրացնելով իւր ամուր ձեռքերի վրայ, պահելով ինձ օդի մէջ վազում էր դէպի կանանչերի մէջ ընկած դին և ինձ էլ գլորեց դէպի նա այնպիսի թափով որ կարծես կամենում էր իմ գլուխս էլ ջախջախել։

Զգում էի որ էս էլ կորած եմ, ահա նա ինձ էլ կսպանի. նա արդէն գլխիս վրայ բարձրացրել էր իւր ոտը և կօշկի կրունկը աչքերիս առջև էր, որ մէկը բռնելով նրա ձեռքից այնպիսի արագութեամբ գլորեց նորան գետին, որ ես էլ չհասկացայ, թէ ինչպէս եղաւ այդ բոլորը։

Այդ յարմար րոպէից օգտուելով, ես տեսայ Էրվէի վրայ իմ Պակիտա աղախնուս, որ ծնկաչոք, վայրենի խելագար կատուի նման կպել էր նորան և մռնչալով փետում էր նորա միրուքը, պէխերը ու երեսը։ Յետոյ նա յան-

կարծ բարձրացաւ, ընկաւ դիակի վրայ երկու ձեռքով ամուր գրկելով նորան—ծածկելով բերանն ու աչքերը համբոյրներով, իւր շրթունքներով բացեց սպանուածի շրթունքները վնտռելով նոցա մէջ շնչառութիւն ու սիրահարի տաք գգուանք։

Ամուսինս բարձրանալով նայում էր այդ համար տեսարանին։ Նա բոլորը հասկանալով ընկաւ իմ առջև ու ասաց. «Օ, ներիր ինձ, իմ թանկագինս, ես կասկածելով ձեզ վրայ սպանեցի այդ աղջկայ սիրահարին, պահապանս խաբեց ինձ»։

Ես շարունակում էի նայել այդ կենդանու ու մեռածի տարօրինակ համբոյրներին ու նրա սիրուց տանջուած հեկեկանքներին։

Եւ հէնց այդ վարկեանից ես հասկացայ, որ պիտի անհաւատարիմ դտնուեմ դէպի իմ ամուսինս։



II.

ՀԱՆԳՈՒՅՑԵԱԼԻ ԳԱՂՏՆԻՔԸ

Նա առանց տանջանքի մեռաւ, հանգիստ, ինչպէս իր ամբողջ կեանքի մէջ մի բիծ—արատ չունեցող կին։ Այժմ նա պարկած է թիկունքի վրայ մահճակալում փակուած աչքերով և երեսի հանգիստ գծերով։

Նորա երկար, սպիտակ մազերը այնպէս էր հաւարուած, որ կարծես նա մահուանից տասը բոպէ առաջ էր գրուել։ Մահուան դժգունութեամբ ծածկուած նորա երեսը այնպիսի հանգստութեամբ էր շնչում, որ առանց դժուարութեան կարելի էր զուշակել, թէ ինչ անմեղ հոգի էր բնակւում այդ մարմնի մէջ, թէ ինչ անխռով կեանք է կրել այդ բախտաւոր պառաւը և ինչպիսի փախճան ունեցել։

Նորա մահճակալի մօտ ծնկաչոր կանգնած որդին ու Մարգարիտ—կոյս Եւլալիան

լալիս էին։ Մանկութիւնից սկսած նա զինուորել էր բարոյականութիւնով, ասվորեցնելով նոցա ոչ մի բանում չ'զիջացող կրօնի և պարտականութեան՝ որ անարատ է պահում մարդու խիղճը։

Նա հանելով դատաւորի ատիճանին և պահելով օրէնքի ամէն մի տառը, անխնայ ճնշում էր թոյլերին ու խեղճերին. դուստրը, տան այդ բարի նպատակներով լցուած թագուհին, մարդկանց ատելու պատճառաւ իրեն նուիրել էր ատուածուն։

***

Նոքա իրենց հօրը բոլորովին չէին յիշում, միայն գիտէին, այն էլ առանց մանրամասնութեան, որ նա էր անբաղդացրել իրենց մօրը։

***

Կոյսը խելագարի նման համբուրում էր մահճակալի վրայ ձգուած հանգուցեալի ձեռքը, որ կարծես ձուլուած լինէր փղոսկրից։ Միւս ձեռքով, անհանգիստ, հոգեկան յուզմունքների մէջ մեռածի նման, նա բռնել էր սաւանը, որ ընդունել էր ալիքների ձև, յիշեցնելով հանգու-

ցեալի վերջին շարժմունքը, որին անմիջապէս յետևում էր յաւիտենական հանգստութիւն։

***

Դռան մի քանի կամաց հարուածները ստիպեցին լացկաններին բարձրացնել իրենց գլուխը։ Ներս մտաւ ճաշից վերադարձող կարմրած մի քահանայ, որ ստամոքսի մարսողութիւնը նոր սկսելու պատճառաւ, ծանրութեամբ էր շունչ քաշում. նա կամենալով օգնել իր անհանգստութեանը, որ ստացել էր վերջին մի քանի գիշերներ անքուն անցկացնելուց, սրջին աւելացրել էր բաւականին կոնեակ։

***

Նորա երեսը կարծես արտայայտում էր տխրութիւն, հոգևորականի այն շինծու տխրութեամբ, որի համար հէնց մահը ծառայում է իբրև մի աղբիւր։ Նա խաչակնքելով մօտեցաւ նոցա և ասաց. «Դէհ, իմ խեղճ որդիքս, ես եկել եմ Ձեզ օգնելու, անցկացնելու այդ Ձեր տխուր ժամերը»։ Սակայն քոյր Եւալիան խլոյն բարձրացաւ «Շնորհակալ եմ Ձեզնից, տէր

հայր, մենք կամենում ենք, որ դա և եղբայրս հանդուցեալի հետ մնանք առանձին։ Ահա մի քանի բոպէ և մենք չենք տեսնի մեր մօրը, որի համար ցանկանում ենք մնալ երեքով միասին, ինչպէս երբեմն, երբ դեռ փոքր էինք և մեր խեղճ... խեղճ մայրը..... նա ոյժ չունէր վերջացնելու, արտասուքը հեղեղի նման հոսում էին նրա աչքերից այն ասելիքն կաշկանդել էր նորան վրայ հասած ծանր անդառնալի կորուստը։

*
* *

Քահանան զլուխը խոնարհեցրեց և զգալով մօտակայ հանդուցեալեան քնքշութիւնը, բաւականութեան ժպիտը երեսին, պատասխանեց. «Ինչպէս Ձեզ հաճելի է որդիքս», նա ծնկաչոք խաչակնքեց, աղօթեց և ապա բարձրանալով կամաց դուրս եկաւ մրմնջալով «Դա սուրբ էր»։

*
* *

Հանդուցեալը և իւր որդիքը մնացին առանձին։ Մի անկիւնում ծածկուած ժամացոյցը իւր միապաղաղ թխթխկոցով լցրել էր ամբողջ սենեակը։ Բայց պատուհանից ներս էր

թափանցում անտառի ու կանաչի թարմ բուրմունքը դրսի աղօտ լոյսի հետ։ Բացի խեցգետինների միանուագ կռռոցից և տանմէջ թռչկոտող միջատներից ոչ ոք չէր համարձակւում խանգարել թագաւորող հանդստութիւնը։ Իդեալական խաղաղութիւնը, Աստուածային անբաղդութիւնը, և անծպտում հանդստութիւնը շրջապատել էին հանդուցեալին, որից առկայծելով լցնում էին շրջապատող բնութիւնը։

*
* *

Յանկարծ դատաւորը, որ ամբողջ ժամանակ կանգնած էր, ծնկաչոք յենուելով հանդուցեալի մահճակալի վրայ սրտաճմլիկ ձայնով կոչեց. «Մայրիկ, մայրիկ, մայրիկ»։ Իսկ քոյրը որ մի կաթուածահարի նման պարկած էր յատակի վրայ, ամբողջ մարմնով դողալով, հեծում էր «Յիսուս, Յիսուս, Յիսուս, մարդկայ Յիսուս»։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՅԿՈՄ
Հ.Ս.Խ.Հ. Պետական Գրադարան
7/XI—1922
անուն Ա. Ալեքսանդրի
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆ

Երկուսն էլ անտանելի թշուառութեան ներքոյ դժուարութեամբ էին շունչ քաշում։ Սակայն սակաւ առ սակաւ նոցա լացը սկսեց մեղմանալ։ Այնուհետև մի բաւական ժամանակ

անցնելուց յետոյ, նորա ոտքի ելան և սկսեցին նայել իրենց թանգագին դիակի վրայ։ Եւ հէնց երեկուայ յիշողութիւնը, որ նոցա բաւականութիւն էր պատճառել երկէկ, իսկ այսօր միայն սուգ ու տրտմութիւն, պատկերանում էր նոցա երևակայութեան մէջ, կենդանանում էր ամեն մի փոքր նմուշներով անգամ, ինչպէս մեղ համար հանգուցեալի պատկերը։ Նորա յիշում էին զանազան դիպուածներ, խօսքեր, անմեղ ժըպտում և նոյն իսկ ձայնի երանգները, որոնցով այլևս նոցա հետ չէ խօսելու հանգուցեալը։ Նորա տեսել են նորան բազդաւոր. հանգիստ և յիշում էին նոյնիսկ նորա արտասանած ֆռազները և ձեռքի փոքրիկ շարժումները, որոնց նա անում էր երբ կամենում էր մի ինչ որ խորհրդաւոր բան պատմել։

***

Այժմ նորա սիրում էին նորան այնպէս սաստիկ ինչպէս նորան չէին սիրել երբ և իցէ՝ կշռադատելով վրայ հասած դժբաղդութիւնը նորա զգում էին միայնակութիւն և հասկանում, թէ ինչ ամուր կապերով էին կապուած նորա հետ։ Նա, որ միակ կապն էր նոցա և կեանքի մէջ, նոցա մայրը, բարի ծնողը և միակ կապը,

որ միացնում էր իրենց նախնիքների հետ, այլևս կենդանի չէր։ Նորա այժմ միայնակ էին և խղճուած իրենց անցեալից։

***

Կոյս ասաց եղբօրը. «Դու գիտես, թէ ինչպէս մայրիկը սիրում էր կարդալ իւր հին նամակները, նորա բոլորը այստեղ պահարանումն են, և արդեօք լաւ չէր լինի, որ մենք ևս այս գիշեր կարդանք վերջին անգամ նորա մօտ և մի անգամ ևս վերակենդանացնենք նորա ամբողջ անցեալը. դա կլինէր մի միջոց, որ կյիշէինք գոնէ վերջին անգամ նորա մօրը և մեր անծանօթ նախորդներին, որոնց նամակները այստեղ են գտնում, և եթէ յիշում ես, որոնց մասին նա յաճախ խօսում էր։

***

Նորա հանեցին արկղից հնացած, դեղնած նամակի ծրարներ, որոնք մեծ ջանքով դասաւորուած էին իրար վրայ։ Ծողովեցին այդ մասունքները մահճակալի վրայ և ընտրելով նրանցից մէկը, որի վրայ գրուած էր «Հայր» բացեցին և սկսեցին կարդալ։

Դոքա հին նամակներ էին, որոնք յաճախ պատահում են հին ընտանիքների արխիվներում, նամակներ, որոնցից վերջապէսփչում է հնութեան ոգին։ Առաջին նամակը սկսւում էր այսպէս. «իմ թանկագին» երկրորդը՝ «իմ սիրելի որդեակս» այնուհետև «իմ սիրելի օրիորդս» և «իմ թանկագին դուստրս»։ Կոյսը սկսեց բարձր և մի առ մի յիշել հանգուցեալի կեանքը և նորա բոլոր քնքուշ յիշողութիւնները։ Իսկ դատաւորը բաղկով յենուած մահճակալին, աչքերը ուղղած դէպի մայրը, ուշադրութեամբ լսում էր։ Յանկարծ քոյր Եւլալիան ընթերցումը ընդհատեց ու ասաց. «Պէտք է այդ նամակները դնել նորա գերեզմանում, կարել նոցանից հանգուցեալի համար սաւան և նորանով թաղել»։ Նա վերցրեց այնուհետև երկրորդ ծրարը, որի վրայ ոչինչ չկար գրած և բարձր ձայնով սկսեց կարդալ. «Իմ պաշտածս, ես քեզ սիրում եմ խելագարի նման։ Անցեալ օրուանից ես կրում եմ դժոխային տանջանք, երբ միմիայն յիշում եմ քո լոկ անունդ։ Ես զգում եմ թէ ինչպէս շրթունքներդ դիպչում են իմ շրթունքներին, աչքերդ՝ աչքերիս, մարմինդ՝ մարմնոյս։ Ես սիրում եմ քեզ, սիրում եմ քեզ։ Դու խելքից հանել ես ինձ։ Իմ գիրկս բացում է և ես վառւում եմ

քեզ երկրորդ անգամ տիրելու ցանկութեամբ։ Իմ բոլոր էութիւնս կանչում, ցանկանում է քեզ։ Ես դեռ յիշում եմ շրթունքներիս վրայ քո տաք համբոյրներդ։

*
* *

Դատաւորը բարձրացաւ։ Կոյսը դադարեց կար-դալ։ Նա խլեց կոյսի ձեռքից նամակը և որոնում էր ստորագրութիւն, սակայն ստորագրութեան փոխարէն, վերջանում էր, «Ես պաշտում եմ քեզ» խօսքերով և «Հենրիկ» անունով։ Նոյա հօր անունն էր Ռէնէ. և այդպէս, դա իրենց հայրը չէր։ Այնուհետև որդին արագ արագ սկսեց նամակները քրքրել, վերցրեց երկրորդը և սկսեց կարդալ. «ես առանց քո փաղաքշանքների չեմ կարողանում ապրել»։ Կանգնելով խրոխտ ինչպէս մի դատաւոր, որդին նայում էր մօր-վրայ։

Կոյսը ցցուած ինչպէս մի արձան, արտասուքը աչքերին նայում էր եղբօրը և սպասում։ Յետոյ եղբայրը դանդաղ քայլերով մօտեցաւ պատուհանին, սկսեց մտածել, նայելով դրսի խաւարի մէջ։

Երբ նա յետ նայեց, քոյր Եւլալիան ցամաքած աչքերով դեռ կանգնած էր մահճակալի

մօտ։ գլուխը խոնարհեցրած։ Նա մօտեցաւ, արագ հաւաքեով նամակները շպրտեց պահարանի մէջ և իջեցրեց մահճակալի վարագոյրը։ Եւ երբ առաւօտեան լոյսի առաջին ճառագայթները թափանցեցին սենեակում, որդին ծանր վեր եաւ և նոյնիսկ վերջին անգամ նայելով իւր հայրացրը մօր վրայ, որին արդէն դատապարտել էր, ասաց քրոջը. «Այժմ քայլիկս հեռանանք այստեղից»։

ՎԵՐՋ

Հ. Ս. Խ. Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ. Ս. Խ. Հ. Պետական Գրադարան
7/Ա-1122
Հանձնած է Մարտիրոսյան
Ս. ՍՅԱՍԵԼԻՅԱՆԻ ԱՆՎԱՆ

2311
2013